

# ԸՆՈՐՅԱՎՈՐ ԱՄԱՆՈՐ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՈՒՆԴ, ՍԻՐԵԼԻ' ՔԱՐԵԿԱՍԵՐ



«ՅԱՅԱԿ» (Նախարարական) թերթը լուիս է ՏԵՍԱԿԱՆ 1920 թ. ԴԵԿԱՏԵՐԵՐԻՑ № 1 - 2 (16702) ԵՐԵՎԱՆԻ 1 ՀՈՒՆՎԱՐԻ 2019 թ. ԳԻՆԸ 40 ԹԵԹՐԻ

## ՄԵԶ ԸՆՈՐՅԱՎՈՐՈՒՄ ԵՆ...



«Վրաստան» թերթի խմբագրությանը եւ նրա անդավաճան ընթերցողին հղում եմ իմ սրտարուի շնորհավորանքը գալիք՝ 2019 թվականի արթիքը։ Մաղթում եմ, որ այս տարին լինի բարության, խաղաղության, նվաճումների եւ երջանկության ավետարերը։

«Վրաստան» թերթը, իր գրեթե հարյուրամյա պատմության ընթացքում, միշտ հավատարիմ է գլխավոր առաքելությանը՝ կամքջել վրացի եւ հայ բարեկամներին։ Համզպված եմ, 2019-ին ես թերժն արժանապատվորեն կշարունակի իր շնորհակալ ուղին եւս մեկ խոսուն էջ բացելով երկու ժողովուրդների փառավոր պատմության մատյանում։

Շնորհավոր նոր տարի եւ Սուրբ Ծննդնը, բարեկամներ։

ՍԱԼՈՒԵ ԶՈՒՐԱԲԻՉՎԻԼԻ  
Վրաստանի նախագահ

Բատոնն Վան. Ի սրտե շնորհավորում եմ Ձեզ եւ Ձեր գլխավորած «Վրաստան» թերթի խմբագրության աշխատակիցների, թերթի ընթերցողների նոր տարին ու Սուրբ Ծննդնը։

Նոր, ժողովրդավարական, հզոր Վրաստանի շինարարության գործում ակտիվորեն ներգործաված մեր հայազգի հայրենակիցներին մաղթում եմ, որ 2019 թվականը յուրաքանչյուրի համար դառնա երազանքների իրականացման, խաղաղության, բարգավաճման ու զարգացման տարի։

Ամենայն բարիք եւ երջանկություն ձեզ եւ ձեր ընտանիքներին։

Դարձանք ՍԱԼՈՒԵ ԶՈՒՐԱԲԻՉՎԻԼԻ  
Վրաստանի վարչապետ



### Պարոն Վան.

Վրաստանի խորհրդարանի անունից սիրով եւ հարգանքով շնորհավորում եմ «Վրաստան» թերթի աշխատակիցներին ու ընթերցողներին նոր տարվա արթիք։

Վրաց եւ հայ ժողովուրդների եղբայրությունը հազարամյակների պատմություն ունի։ Տասկանում եմ ազգությամբ հայ մեր քաղաքացիներին մաղթել խաղաղություն եւ փոխադարձ հարգանքով լի բարեկամության մշտանորոգ տարիներ։

Մենք միասին պետք է կառուցենք հզոր, ժողովրդավարական ու հարուստ Վրաստան, ուր նրա յուրաքանչյուր զավակը ունենա ազատ ապրելու, աշխատելու եւ ստեղծագործելու երջանիկ երեխաներ դաստիարակելու հնարավորություն։

Շնորհավորում եմ նոր տարին՝ 2019 թվականը եւ մաղթում ամենայն բարիք։

ԻՐԱԿԼԻ ԿՈՐԱԽԻՉԵ  
Վրաստանի խորհրդարանի նախագահ



### «Թող ամեն հարկի տակ թեածի սերը...»

«Վրաստան» թերթի խմբագրության աշխատակիցներ, ընթերցողներ, սիրելի վիրահայեր, Վրաստանում ՀՀ դեսպանության ու անձամբ իմ անունից սրտագին շնորհավորանքներ եմ հղում Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների առթիվ։ Կարեւորագույն մաղթանք է, որ լինեք առօղջ ու երջանիկ, որ գալիք նոր տարին նշանավորվի միմիայն բարի իրադարձություններով։



Անցնող տարին նշանակալի տարի էր հայ-վրացական հարաբերությունների համար։ Տեղի ունեցան բարձր մակարդակի մի շարք փոխայցելություններ, ծեր բերվեցին կարեւոր պայմանավորվածություններ, վիրահայության համայնքային կյանքը հագեցած էր բազմաթիվ իրադարձություններով։

(Ծարունակությունը՝ 2-րդ էջում)

### Թանկագին բարեկամներ։

Ի սրտե շնորհավորում եմ մեր երկու ժողովուրդները միմյանց կամքջող «Վրաստան» թերթի խմբագրության աշխատակիցների, թերթի ընթերցողների նոր տարին ու Սուրբ Ծննդնը։ Օգտվելով արթիք՝ իմ ամանորյա մաղթանքներն են հղում Սամցխե-Զավախերի բնակիչներին, այստեղ ապրող բոլոր ընտանիքներին։ Շնորհավոր ծեր նոր տարին, սիրելի՝ բարեկամներ, երջանկություն ու բարգավաճում ձեզ եւ ձեր ընտանիքներին։

ԲԵՍԻԿ ԱՄԻՐԱՍԱՇՎԻԼԻ  
Սամցխե-Զավախերի երկրամասում պետական լիազոր-նահանգապետ

Թանկագին բարեկամներ, ողջունում ու շնորհավորում եմ ձեզ նոր տարվա եւ Սուրբ Ծննդի առթիվ։ Սաղթում եմ ձեզ, ձեր ընտանիքներին երջանկություն, խաղաղություն, առաջնորդաց, իսկ մեր սիրելի «Վրաստանին» երկարակեցություն, բազում ընթերցողներ։



Ամանորյա իմ շերմ մաղթանքներն են հղում իմ սիրելի ախալքալաքցիներին ու նինոծմինուացիներին։ Սիրելիներս, մենք համատեղ ջանքերով կարողացանք նշանակալիորեն փոխել մեր երկրամասի պատկերը, այն դարձնել ավելի գրավիչ ու ժամանակակից։ Միասին աշխատեցինք, միասին առաջնորդաց ունեցանք։ Սակայն անելիքներ դեռ շատ ունենք, կարգավորման ենթակա հիմնախնդիրներ շատ են...

Դամոզված եմ, որ 2019-ին կշարունակենք համատեղ մեր գործունեությունը՝ ի բարօրություն մեր հարազատ երկրամասի, նրա աշխատասեր ու զանադիր բնակչության։

ՐԵՆՉԵԼ ՄԿՈՅԱՆ

Ախալքալաքի եւ Նինոծմինուացի մումիցիպալիտետներից Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր





